Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.542-3
Մ-37
891.99
Մ-37

MARS

ԻՆՉՊԷՍ ԱՄՈՒՍՆԱՑԱՅ

(ԿԱՂԱՆԴԻ ՉՐՈՅՑ)

Հրատ. Յ. Յովսէփեանի:

ԲԱԳՈՒ
Տպարան „Ակօր"
1903

118бш
891.542-3
Ս-37
Mars.
296
1001/2605
26 OCT 2013
8 NOV 2011

ԻՆՉՊԷՍ ԱՄՈՒՍՆԱՑԱՅ

(ԿԱՂԱՆԴԻ ՉՐՈՅՑ)

Հրատ. Յ. Յովսէփեանի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Армянская Библиотека
7/XI 1922
Բաղուի Հայոց
Հոգիսիմեան Դպրոց
Եկեղ.-ծխական (օրիորդաց)

ԲԱԳՈՒ
Տպարան „Աւրոր“

26 .06. 2013
42797

Дозволено цензурою, 2 Ноября 1902 г. гор. Тифлисъ.

Ի՞ՆՉՊԷՍ ԱՄՈՒՍՆԱՑԱՅ

Ա.

Ընկերներից մէկը՝ Օնիկը օր առաջ խօսք էր առել մեզանից, որ կաղանդի իրիկունը իրենց մօտ անցնեմ. իսկ ես խօսք էի տուել իրեն։ Նա բնակւում էր իւր ամուսնացած քրոջ՝ Լիզայի մօտ։ Դա մի խաղաղ ու երջանիկ ընտանիք էր. այր և կին կարծես մի խնձոր լինէին մէջիցը կիսած։ Երկուսն էլ երիտասարդ, երկուսն էլ գեղեցիկ ու միշտ իրենց վիճակից գոհ։ Մէկի այս-ն այսը և միւսի համար, իսկ ոչ-ը՝ ոչ։ Նրանց ամուսնական կեանքի խաղաղութիւնն ու երջանկութիւնը դեռ չէր վրդովուել ոչ մի թիւրիմացութեամբ։ Նրանք իրար պաշտում էին և պաշտում էին զիտակցօրէն, համոզմունքով։ Այդ իսկական սիրոյ ու համերաշխութեան մասին այնքան բան էի լսել, որ ես էլ փափակում էի ծանօթանալ նրանց հետ։

Եւ գնացի։

Տան տիրոջից ու տիկնոջից բացի այնտեղ հանդիպեցի և ուրիշ հիւրերի, որոնք բացառապէս զրադէտների շրջանին էին պատկանում։ Հազիւ թէ մենք ծանօթացել և մի քանի խօսք էինք փոխանակել, երբ միւս սենեակից ներս խուժեց երկսեռ մանուկների մի ուրախ խումբ։ Կարծես փեթակից դուրս թռչող մեղուներ լինէին, սակայն ճլվլլում էին գարնան ծիծեռնակների նման։ Երեխաները մօտ տասնուհինգ հոգի էին տղաները միատեսակ և աղջիկները միատեսակ հագուստների մէջ։ Դպրոցական սաների տպաւորութիւն թողին վրաս։ Բայց դա դպրոց չէր, ոչ էլ մանկահասակ կինը կարող էր այդքան երեխայ ունենալ. Հետաքրքրութիւնս զոհացնելու համար դարձայ Օննիկին։

— Սրանցից երկուսը միայն քրոջս զաւակներն են, իսկ միւսները որբ են, անհայր և անմայր,—պատասխանեց Օննիկը։

— Անշուշտ մօտիկ բարեկամ կամ ազգականներ կը լինին, հարցրի ես։

— Բոլորովին օտար երեխաներ...

Բայց նա խօսքը դեռ չէր վերջացրել. երբ տան տէրը՝ Միհրան էֆէնդին հրաւիրեց մեզ դահլիճը։

Դահլիճ ասածդ մի միջակ մեծութեամբ սենեակ էր, բայց խիստ սիրուն ու ճաշակով կահաւորուած։ Զորս կողմը փայլում էր խնամք և մաքրութիւն։ Մէջ տեղում դրուած քառակուսի պատուանդանի վրայ կանգնած էր տօնածառը։ Բազմաթիւ մոմեր երևում էին կանաչ ճիւղերի մէջ, որոնք զարդարուած էին զոյնզոյն ժապաւէն-

ներով ու ծոպերով։ Նոյն կանաչ ճիւղերից քարշ էին արած երեխայական զանազան խաղալիքներ, շաքարեղէններ, շաքարատուփեր, ոսկեզօծ փոքրիկ գրքոյկներ, և՝ ի լրումն այս ամենի, նոյն ճիւղերի մէջ վառւում էին զանազան գոյնի լապտերիկներ, որոնց լոյսը ընկնելով առարկաների վրայ և բէկբէկուելով կանաչ տերևների մէջ, անդրադարձաբար .ողողում էր սենեակը մի տեսակ կախարդական փափուկ լոյսով։

Այդ տօնածառը դարձաւ մեր խօսակցութեան առաջին նիւթը, որ յետոյ դարձաւ կաղանդի նուէրի սովորութեան վրայ։ Մէջն ասում էր՝ թէ դա նորամուտ սովորութիւն է և թւում էր նրա վնասակար ազդեցութիւնը նիւթական տեսակէտից։ Մի ուրիշը, որ հեղինակութիւն էր վայելում հիւրերի մէջ, ընդհակառակն էր ասում. նա պնդում էր, որ դա հայերիս համար նորամուտ չէ, այլ պատմական ժամանակներից մնացած մի սովորութիւն, միայն թէ ձևափոխուած, տյսինքն յարմարեցրած ժամանակի պահանջներին։ Մի երրորդը խօսք առնելով նկատեց, որ այդ սովորութիւնը հին ժամանակներում հաստատուած է եղել բարեգործական վսեմ սկզբունքի վրայ, այսինքն՝ հարուստ բարեկամը, ազգականը կամ դրացին, չուզելով աղքատ բարեկամին կամ դրացուն վիրաւորել և յարգելով աղքատի արժանապատուութիւնը, օգնութիւն է հասել կաղանդի նուէրի պատրուակի տակ... Հիւրերից մի ուրիշը վերջինիս առարկութիւնները ընդունելով հանդերձ, համաձայն զրտնուեց նաև առաջնի առարկութիւնների հետ. բայց աւելացրեց որ այդ գե-

զեցիկ սովորութեան պատրուակի տակ ձեռնհաս մարդիկ կարող էին զէթ մի քանի օրով սրբելու շատ շքաւորների արտասուքներ, առանց նրանց արժանապատուութիւնը վիրաւորելու, եթէ նրան չտային լոկ առատրա կան բնաւորութիւն կամ այդ աղնիւ գործի մէջ չխառնէին զանազան շահասիրական ու փառասիրական միտումներ...

— Խօսրիս որպէս ապացոյց կարող է ծառայել Միհրան էֆէնդիի և իւր աղնիւ տիկնոջ վարմունքը, որի մասին գիտէք ամենքդ, եղբայրացրեց վերջին խօսողը։

— Ներեցէք, այստեղ կայ մէկը, որ չգիտէ, նկատեց հիւրերից մէկն ինձ անկարկելով։

— Բարեկամս հէնց սկզբից արտայայտեց իւր հետաքրքրութիւնը, երբ տեսաւ երեխաների խումբը, բայց այդ պաշտօնը ինձ չվերաբերելով, չկարողացայ իրեն գոհացնել, մէջ մտաւ Օնիկը։

— Այո, այո· դա ձեզ չի վերաբերում, ասաց տանտէրը՝ Միհրանը և կնոջն ակնարկելով, աւելացրեց.— այդ Լիզայի իրաւունքն է։

Ասա դարձաւ կնոջը.

— Ինչպէս տեսնում եմ, Լիզա, այս տարի էլ ստիպուած պիտի լինիս պատմութիւնդ կրկնելու։

— Զարմանալի է,—ասաց տիկինը, սրանից եօթ տարի առաջ մի դէպք է պատահել և ստիպուած եմ ամեն տարի, ճիշտ այս օրս միևնոյն դէպքը պատմելու։

Յետոյ հիւրերին դառնալով աւելացրեց.

—Յիշում էք, անցեալ տարի ինքս ինձ խօսք տուի, որ այլևս չպատմեմ...

— Այդ ես գիտեմ, — նկատեց ամուսինը,—բայց ինքդ քեզ տուած խօսքդ յետ պիտի ընդունես և դրանով ոչ որի առջև չես կարմրել։ Ի՞նչ կայ որ, այսօր տուած խօսքը յետ ընդունելուց էլ դիւրին ու սովորական բան չկայ. և յետ են ընդունում ամենապատուաւոր մարդիկ տուած ամենապատուաւոր ու աղնիւ խօսքերը, առանց նոյնիսկ կարմրելու։ Բացի այդ, անելիք պատմութիւնդ սերտ կապ ունի մի վարկեան առաջ յարուցուած հարցի, այն է՝ կապանքի նուէրի սովորութեան օգտակար կամ վնասակար լինելու հարցի հետ։

— Կայ նաև մի ուրիշ յարգելի պատճառ,—մէջ մտաւ Օնիկը,—մեր Կովկասցի բարեկամը, որ բարեհաճել է այս նուիրական օրս մեզ սեղանակից և ուրախակից լինելու, թող գիտնայ, թէ ինչպէս ամուսնացաք։

— Գուցէ դրանով ձանձրացնեմ նրանց, որոնք արդէն մի քանի անգամ լսել են, ասաց տիկինը։

Հիւրերը միաբերան պատասխանեցին, որ ընդհակառակն, իրենք չափազանց գոհ կը մնան և խնդրեցին, որ պատմէ։

Վերջապէս տիկինը յանձն առաւ։

Բ.

Քիչ առաջ ասացի, որ այն դէպքը, որի մասին պիտի պատմեմ ձեզ, պատահել է ճիշտ եօթ տարի սրանից

տռաջ և ճիշտ այս օրը, գուցէ և այս ժամին,—այսպէս սկսեց տ. Լիղան։—Հայրս վաղուց արդէն մեռած էր։ Ես հազիւ յիշում եմ հանգուցեալին։ Գաղթական լինելով, այստեղ մենք ոչ մի ազգական չունէինք. մեր միակ կերակրողն ու պաշտպանը մայրս էր։

Ես հիմայ եմ համոզւում, որ դաւառական քաղաքների ու գիւղերի աղքատները, մանաւանդ որբերը աւելի երջանիկ են և այնտեղերի ժողովուրդն աւելի գթառատ ու մարդասէր է, քան մեծամեծ քաղաքներում, օրինակ, Պոլսում, ուր այնքան հարուստներ կան, ուր այնքան բարեգործական ընկերութիւններ կան։ Նահապետական գիւղացին իւր աղքատ դրացուն ու անտէր որբին օգնութիւն հասնելը, խնամելը ոչ թէ համարում է մի մարդասիրական գործ, այլ անխուսափելի պարտականութիւն։ Քաղաքներում, օրինակ հէնց Պոլսում աղքատին, չքաւորին, անպաշտպան որբին օգնելու պարտականութեան զգացումը մեռած է։ Պարտականութեան տեղ լոյս է ընկել ինչ-որ մարդասիրութիւն առաձգական բառը, որը ռետինի նման, արտաքին ոյժ, ազդեցութիւն է պէտք, որ նա երկարելով հասնի մինչև թշուառը։ Այստեղ, ուր ինքնաբերաբար օգնութեան ձեռք կարկառող չկայ, ուր ընկածին բարձրացնելու, քաղցած ծարաւին մի կտոր հաց և մի բաժակ պաղ ջուր տալու պարտականութիւնը անծանօթ է, խեղճի թշուառի, որբի վիճակն անտանելի է...

— Այ, տեսա՞ք, տիկին,—նրա խօսքն ընդմիջելով, նկատեց հիւրերից մէկը.—այդ պատմութիւնը մի երկու

անգամ լսել եմ ձեզնից, բայց այդ յառաջաբանը լսում եմ առաջին անգամ։ Այստեղից ենթադրում եմ, որ հակառակ այն բանի, որ վճռում էք այլևս չկրկնել այդ պատմութիւնը, այնուամենայնիւ նա միշտ զբաղեցնում է ձեզ և դուք շարունակ մտածում, մշակում էք նրան։

— Խօստովանւում եմ, որ ձեր նկատողութիւնը ճիշտ է։ Այդ դէպքը երբէք մտքիցս չի հեռանում. ես յիշում եմ ամեն օր, ամեն ժամ, մտածում եմ ժամերով և պէտք է այս էլ ասեմ, որ այդ մասին մտածելն ինձ անսահման բաւականութիւն է պատճառում։

— Սակայն կը խնդրէինք, որ շարունակէք,—մէջ մտաւ հիւրերից մի ուրիշը և նկատեց, թէ պատմութիւնն ընդմիջուելով տպաւորութիւնը թուլանում է։

Այս նկատողութեան վրայ տիկինը խօսք առաւ, որ իրեն չընդհատեն և շարունակեց։

— Իմ արած յառաջաբանով, ես մտածեցի մի թեթև գաղափար տալ մեր Կովկասցի հիւրին այն մասին, թէ որպիսի պայմանների մէջ էինք գտնւում մենք։

Մեր տան պահպանութեան ամբողջ հոգսը ծանրացած էր մօրս վրայ։ Նա՝ իրաւ՝ ծեր չէր, հազիւ երեսուն և հինգ—քառասուն տարեկան լինէր, սակայն դիւրին էլ չէր մի այսպիսի անհիւրնկալ քաղաքում ամբողջ ընտանիք կառավարելը։ Հօրս կենդանութեան ժամանակ իսկ մի լաւ կեանք չէր վարել, իսկ նրա մահից յետոյ, շարունակ վեց տարի նրա վարած կեանքը տաժանակիր աշխատանքի դատապարտուածի կեանքից ոչնչով տարբեր չէր։ Միշտ դրկանք, միշտ տանջանք, միշտ ախ ու վախ

— այս բոլորը ժամ առ ժամ հալում ու մաշում էին նրան։ Եւ նա չէր գանգատում, ճակատագրի դէմ չէր բողոքում, ոչ իսկ մենք մի թեթև տրտունջ լսեցինք նրա բերանից։ Այսպիսի ծանր պայմանների մէջ գտնուելով հանդերձ, մայրս վերին աստիճանի ինքնասէր, պատուասէր մի կին էր, նա օգնութեան խնդրանքով երբէք չդիմեց ոչ որի և կարծես վճռել էր ոչ ոքից օգնութիւն չհայցելու մինչև մահ։ Այդպէս էլ արեց. ծանր աշխատութիւնից ուժասպառ, նա մեռաւ կամ՝ աւելի ճիշտն ասած, իւղը սպառուած ճրագի նման հանգաւ, միայն հանգաւ աշխատութեան մէջ, գործը ձեռքում։

Այդ ժամանակ ես տասնուհինգ տարու մէջ էի, միջնակ եղբայրս՝ Օննիկը տասնուհինգ, իսկ փոքրը՝ Երուանդը վեց տարեկան։ Օննիկը հնարիւ իւր պինդերեսութեան կարողացել էր գիշերօթիկ ընդունուել վարժարանում, որով նա մեզ մնաս կամ օգուտ չէր բերում։

— Արդարացի չես խօսում, Լիզայ, — ծիծաղելով նկատեց Օննիկը, — մի՞թէ օգուտ չես համարում այն, որ ես գլխիս ճաքը տեսնելով, մի երկրորդ բեռը չդարձայ մօրս վրայ։

— Օննիկը ճիշտ է ասում, եթէ նա այնքան ճարպիկ չդտնուէր, չգիտեմ ինչ կըլինէր մեր դրութիւնը...

— Կը լինէր այն, ինչ որ եղաւ և կըլինի այն ինչ որ պիտի լինի, ծիծաղելով մէջ մտաւ ամուսինը և աւելացրեց հիւրերին դառնալով, — ինչպէս տեսնում եմ, տիկինս խօսելու լաւ ախորժակ ունի և եթէ շարունակի իւր պատմութիւնը միջանկեալներով համեմելու, դեռ երկար

կըտևի, այն ինչ մեր կոկորդները չորացել են, հարկէ, որ թեթև կերպով իւղենք։

Ապա ծառային դառնալով, հրամայեց օղի և կօնեակ բերել իրենց անբաժան պարագաներով հանդերձ։

Տան տիրոջ հրամանը անմիջապէս կատարուեց։ Մի-մի բաժակ օղիով կամ կօնեակով կոկորդները իւղելուց և վրայից էլ ընտիր խաւիարի բուտեր բերող ճաշակելուց յետոյ, խնդրեցինք տիկնոջ որ շարունակի։

Նա շարունակեց։

— Մօրս մասին խօսելով նկարագրեցի ձեզ նաև մեր վիճակը, ուստի բաւական է ասել, որ նրա մահից յետոյ մեր ամբողջ գոյքը կազմում էր մի քանի անարժէք կարասիք և տասներկու հատ մետալիք [1]), որով խեղճ մօրս համար սաւանացու դնել տուի։ Պէտք է ասեմ, որ նրա թաղումը ձրի կատարուեց, բայց նախ՝ այդ թաղումը ամենևին նման չէր սովորական թաղման և երկրորդ՝ նոյն իսկ այդ կիսաթաղումն էլ յաջողուեց երկար ու բարակ բանակցութիւններից ու պաշտօնական ինչ-ինչ ձեակերպութիւններից յետոյ։ Որովհետև մօրիցս յետոյ տան հոգսը ծանրանում էր ինձ վրայ և որովհետև տանը բացարձակապէս ոչինչ չունէինք, ուստի հենց նրա դիակը դուրս տարած բոլորին ես էլ դուրս ելայ գործ, ապրուստ որոնելու։ Այն հոմոզում, թէ ես վոխարինել եմ մօրս, ինձ սիրտ, քաջութիւն տուեց և ես աւանդ քաշուելու դիմեցի այն ընտանիքին, ուր աշխատում էր մայրս և պատմեցի մեր դրութիւնը։ Տանտիկինը արհես-

[1]) 1 մետալիքը=2 կոպեկ։

տական կերպով դէմքը մի քիչ տխրեցրեց, մի քիչ էլ կեղծ ախ ու վախ քաշեց, ապա մօրս հասցէին մի քանի զովասանական խօսքեր շռայլելուց յետոյ, բարեհաճեց ազգասիրաբար և մարդասիրաբար նրա պաշտօնը ինձ յանձնել, ի հարկէ կէս գնով։ Կէս գին ասելով պէտք է հասկանալ մէկ մէջիդիէ արծաթ[1]) շաբաթը։ Ինձ թւաց թէ այդ կինը մի հրեշտակ է, մի մարմնացեալ գթութիւն, որ ձեռքիցս բռնելով բարձրացնում է մինչև երկինք։ Ի՜նչ պիտի անէի, եթէ այդ կինը ինձ մերժէր։ Մի բոպէ մոռացայ մօրս ծանր կորուստը, մոռացայ, որ տարան դերեզման և գուցէ հենց այդ վարկենին անգութ մարդիկ թիերով հող ու քար էին թափում նրա վրայ։ Ինձ թւում էր, թէ հազար ոսկի եմ գտել, այնքան գոհ ու ուրախ էի։ Չէ՞ որ տան վարձը վճարելուց յետոյ, դէթ չոր հացի գին էլ կըմնար։

Բարեբաղդաբար ամառ էր, որ միակ բարերարն է աղքատ դասակարգի։ Որքան կուզէի, որ ամառնային ամիսները երկարէին յաւիտենականութեան չափ։ Բայց նախախնամութիւնն ունի իւր աւելի խմաստուն հաշիւները և դեռ ինչպէս ասած՝ աչքս չթարթած, վրայ հասաւ աշունը և ապա ձմեռը։

Սաստիկ ձմեռ էր այդ տարին. քաղաքը երկար ժամանակ թաղուած մնաց ձիւնի տակ, որ խիստ հաղիւ է պատահում, իսկ Ոսկեղջիւրը սերակալից։ Ծախքերս բնականաբար աւելացան, թէև ազգասէր տիկինը ռոճիկս նոյնը թողեց։ Տաք կերակուրի մասին մտածել այլևս յի-

[1]) 1 մէջիդիէն, որ 20 դահեկան (ղրուշ) ունի=160 կոպէկի։

մարութիւն էր, հազիւ կարողանում էի չոր հացի գին յետ դցել։ Իսկ ձիւնաթաց, խոնաւ և խարխուլ բնակարանի մէջ ապատ մուտք ունէր ձմրան սառը քամին, որի դէմ պաշտպանուելու համար մեր բերանի չունչից բացի, ուրիշ ոչ մի միջոց չունէինք։

Այս բոլորից դիւրին է երևակայել, թէ որքան թշուառ էինք ես և փաքր եղբայրս։ Այնուամենայնիւ գոհ էի, հաւատացէք, որ գոհ էի և օրը մի քանի անգամ փառք էի տալիս Աստծուն, որ խոպառ չէր զրկում մեզ իւր խնամքից։ Չէ՞ որ ես ճանաչում էի այնպիսի ընտանիքներ, որոնք հազար անգամ աւելի թշուառ էին մեզնից։

Աղքատներ, թշուառներ շատ կան, որպէս և աղքատութիւն, թշուառութիւն տեսնում է ամեն որ։ Բայց ուրիշ բան է տեսնել, ուրիշ բան է զգալ և իւր անձի վրայ փորձել նրա արհաւիրքը։ Լոկ տեսնելով թշուառութեան մասին ճիշտ գաղափար կազմել դժուար է, նոյնիսկ լեզուն ու գրիչը շատ անզօր են նկարագրելու իսկական գոյներով։ Այդ պատճառով էլ աւելորդ եմ համարում ուրիշ որև է մի բառ աւելացնելու արդէն ասածիս վրայ։

Գ.

Ձիւտ այսօրուան օրն էր. Դեկտեմբերի երեսուն և մէկը։

Այն ընտանիքը ուր ես աշխատում էի սերուած էր յայտնի տոհմից և իշխանավայել կեանք էր վարում։ Նրանց համար, ինչ իրենց անձնական հաճոյքին ու շռայլ կեան-

քին էր վերաբերում, դրամը ոչ մի արժէք չունէր։ Շատ կարճ ժամանակից յետոյ համոզուեցի, որ հանգուցեալ մայրս իզուր էր զոլում նրանց, որովհետև իրենց շրջանից դուրս նրանք ոչ ոքի հետ մօտ յարաբերութիւն չունէին, իսկ ծառաների, սրպէս և բոլոր կարօտ ու աղքատ դասակարգի վրայ նայում էին փողոցային շան նման, որոնք շռայլ սեղանի փշրանքով էլ զոհ սլէտք է լինէին։

Նոյնն էին և ամենքը, որոնք նրանց հետ ազգականութիւն, բարեկամութիւն կամ յարաբերութիւն ունէին։ Կարծես թէ բոլորն էլ մի ծառի պտուղ, մի սանրի կտաւ լինէին։

Ասացի, որ Դեկտեմբերի երեսուն և մէկն էր։ Այդ օրը աշխատանքը եռապատիկ ու քառապատիկ աւելի շատ ու ծանր էր։ Դեռ լուս ու մութին, Երուանդին հետս առած, արդէն գնում էի պաշտօնիս վրայ։ Միւս օրը նոր տարի լինելով, ես ոտիպուած էի ահագին ապարանքի բոլոր սենեակները պատշաճաւոր կերպով մաքրելու, բացի ուրիշ զանազան աշխատանքներից։ Ես աշխատում էի չորս ձեռքով, կրակի նման, որպէս զի ոսվորականից մի քիչ շուտ գործաթող լինեմ։ Հաւատացէք, որ այսօր էլ ինձ համար մութն է, թէ ինչու էի ուզում շուտ թողնել աշխատութիւնս, ինչ ունէի ինձ համար անելու։ Արդեօք միայն այն պատճառով, որ կաղանդ էր, թէև հասարակ օրերից ոչ մի տարբերութիւն չունէր ինձ համար։

Երեկոյեան պահուն գործերս վերջացնելուց յետոյ, ուզեցի սենեակները կրկին ոտքիս անցնել, աւելի ապա-

հով լինելու համար։ Ի միջի այլոց, մտայ դահլիճը։ Ի հարկէ Երուանդն էլ, տան տիկնոջ կատուի նման, միշտ ետևիցս վազ էր տալիս։ Դահլիճի մի անկիւնում կանգնած էր մի մեծ, ծայրը մինչև առաստաղը հասնող ծնածառ, որին զարդարելու համար մասնաւոր վարպետ էր հրաւիրուած։ Ի՞նչ ասես որ չկար այնտեղ։ Նա նմանում էր խիստ ճաշակով և շքեղ զարդարուած նորահարսի և թւում էր ինձ, թէ նրան մարդկային ձեռք չի դիպել, թէ նա հենց այդպէս զարդարուած բուսել է հողի գրկից։

Որովհետև վարպետը դեռ չէր աւարտել գործը, ուստի ես չհամարձակուեցի մօտենալ և սկսեցի պատի առաջև կանգնած հայելին մաքրել։ Այդ ժամանակ, հայելու մէջից աչքս ընկաւ Երուանդին, որ դահլիճի դրան մի անկիւնում կանգնած նայում էր զարդարուն ծնածառին։ Նրա նայուածքը նկարագրել կարելի չէ, այդ նայուածքի մէջ կար բուռն կարօտ, անդուսպ ցանկութիւն, մի խելացնոր յափշտակութիւն։ Նա նայում էր լայն բացած հրայայտ աչքերով և կարծես հենց այդ աչքերով ուզում էր կլանել, լարել ծնածառը իւր ամբողջ զարդ ու զարդարանքով...

Սրտիս մէջ մի սուր ծակոց զգացի, գլուխս սկսեց գառնալ, թէև հայեացքս կարծես մագնիսացած էր Երուանդի վրայ։ Ես որ արդէն հասակս առած աղջիկ էի ու այդ շքեղ ծնածառը այնքան գրաւում էր ինձ, հապա ինչ խոր ազդեցութիւն կարող է գործել երեխայի վրայ, նրա մանկական սիրտը որքան կրցանկար, որ այն սի-

ղուն առարկաներից, խաղալիքներից ու շաքարեղջիներից ինքն էլ ունենար ...

Գուցէ ասածս ձեզ համար մի շատ սովորական և դիւրին բան երևայ, բայց հաւատացէք, որ այնքան էլ հեշտ չէ ականատես լինել մի այդպիսի ցնցող տեսարանի, մի տեսարան, որ պատկերացնում է իրական թշուառութիւնը իւր բոլոր հաճոյքներով, բաղձանքներով, տենչանքով ու կարօտով։

Մօրս մահից յետոյ, առաջին անգամը լինելով, սիրտս փլեց և ես գործի պատրուակով վարագոյրի ետև քաշուեցի և կուշտ ու կուռ լաց եղայ։ Արտասուքն, իրաւ՝ թեթևացրեց ինձ, բայց Երուանդի դիրքը, կեցուածքն ու նայուածքի լարիչ արտայայտութիւնը չփոխեց։ Նա քերանը լայն բացած, մատը շրթունքին դեռ շարունակում էր նայել։

Այս ինձ համար ծանր դրութիւնից ազատուելու մտքով, ներողութիւն խնդրելով տիկնոջից, «տկար եմ» ասացի ու դուրս ելայ։ Մեր ճանապարհն անցնում էր Բեբայի մեծ փողոցով։ Երկու կողմի վաճառատներն արդէն մի քանի օր էր, ինչ զարդարուած էին անտոմար շքով։ Հայելու նման մաքուր ու վճիտ ապակիների ետև դարսուած էին մէկը միւսից գեղեցիկ, աչք խտղեցնող առարկաներ, որոնց մէջ առաջին տեղը բռնում էին զանազան խաղալիքներ և յատկապէս նուէրի համար պատրաստուած այլևայլ իրեր։

Երուանդին շատ էին դիւր գալիս այդ խաղալիքները։ Նա աչքը չէր հեռացնում նրանցից և կարծես ուզում էր

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ C.P.A ՊՈԼԻՏԻԿԱ

նայուածքով լաբել։ Ես ի հարկէ տեսնում էի, սիրտս մղկտում էր, հոգիս սանջւում և արագացնում էի քայլերս։ Բայց նա ոտքը քարշ էր ձգում, մօտենում էր վճիտ ապակուն, ձեռքը մեկնում էր սիրած առարկան շոշափելու, սակայն ապակին արգելում էր։

— Քոյրիկ, վերջապէս փեշրիցս քաշելով, անհամարձակ ձայնով կանչեց Երուանդը։

Ես նայեցի, բայց որովհետև հասկանում էի միտքը, չխօսեցի։

— Քոյրիկ, կրկնեց նա մի քիչ համարձակութիւն ստանալով,—տես ինչ սիրուն բաներ են... տես այ այն փոքրիկները մի մի բան ունին, մէկը տիկնիկ և որքա՜ն սիրուն աչքերով ու մազերով, միւսը մի կառք. նայիր, ինչ լաւն է. այն երրորդի ձին մանաւանդ... ա՛խ, քոյրիկ մէկ հատ էլ ինձ համար չե՞ս առնի, թէկուզ այն փայտէ ձին... տես, ինչ սիրուն է... գլուխն, աչքերն, ականջները...

Մինչև նա կըվերջացնէր իւր ճառը, մենք արդէն անցել էինք։ Բոլոր ժամանակ ես այնպէս էի ձևացնում, թէ չեմ լսում, թէև ոչ միայն լսում էի այլ և մի պարզ հայելու նման տեսնում էի նրա փոքրիկ սրտի ճմլումը։ Սակայն ինչ կարող էի անել։ Գրպանումս ընդամենը մի դահեկան ունէի, որ մի հացի գին էր, որով պիտի անցնէինք թէ կաղանդը և թէ նոր տարին։ Իսկ խաղալիքներից ամենաաժանը գրպանիս դրամի կրկնակին, եռակին արժէր։ Բայց վեց—եօթ տարեկան երեխան կարող էր հասկանալ այդ։ Նա շարունակում էր փեշրիցս

քարշ ընկնել, սեղմում, ձգում էր ձեռքս, մի քանի քայլ առաջ անցնելով, նայում էր երեսիս ու կրկնում իր մանկական ուղեղն զբաղեցնող խնդիրը։ Եւ նա խօսում էր այնպիսի աղաչական ձայնով, նայուածքին տալիս էր այնպիսի աղերսական արտայայտութիւն, որ տանել չէի կարողանում։ Ինձ թւում էր թէ աշխարհը զլխիս մթնում է, արիւնը սառչում է երակներիս մէջ, ներսս ամեն ինչ քանդւում, կործանւում է և թէ այդ խորտակման խուլ դղրդիւնը ոչ միայն զգում եմ, այլև լսում եմ ականջովս և աչքովս տեսնում։

Այն տեսարանը երբէք չեմ կարող մոռանալ։ Թող անցնեն հարիւրաւոր տարիներ. թող բազդը, երջանկութիւնը անձրևի տարափի նման տեղայ զլխիս — դարձեալ անզօր են ջնջելու կամ եղծելու նրա յիշողութիւնը։ Գերեզմանը, միայն գերեզմանը կարող է ջնջել այն, ինչ որ թշուառութիւնն է խառնում մեր արիւնի, մեր էութեան մէջ։ Հաւատացէք խօսքիս, որ հենց այժմ, թէև խօսում եմ ձեզ հետ, բայց աչքիս պատկերացած է Երուանդը իւր աղաչական նայուածքով, իւր կիսաբաց շրթունքով և խղճալի դէմքով։ Եւ մի բոլէ ուզում եմ խաբուել, թէ դա յիշողութիւն չէ, պատրանք չէ, այլ իրականութիւն...

— Փորձեցէք, տիկին, նկարագրել այդ տխուր տեսարանը, որ այնքան խոր տպաւորութիւն է թողել ձեր վրայ,—նրա պատմութիւնն ընդմիջելով, նկատեց հիւրերից մէկը։

— Այդ բանը մոքովս անցել է, սակայն հրաժարուել եմ։ Բառերը քիչ են, ժժգոյն ու ապքատ պատկերացնելու մի այդպիսի տեսարան։ Սակայն եթէ նկարիչ լինէի, կընկարէի իրականութեան չափ կենդանի գոյներով, այնքան կենդանի, որ կարողանար քարացած սրտերն իսկ յուզելու, քարերին էլ լացացնելու...

Յամենայն դէպս, այն բոլորին լաց լինելու տրամադրութիւն չունի. այլ մտածում էի, որ պէտք էր մի բան ասել երեխային, պէտք էր պատասխանել։ Բայց ինչ ասէի. ապքատութեան ու զրկանքի մէջ եթէ նրա ուղեղը անզօր էր դանուել դուշակելու, որ խաղալիք և այլն մեր կարողութիւնից վեր են, ինչ ազդեցութիւն կարող էին զսրծել իմ խօսքերը, բացատրութիւններս։

Այնուամենայնիւ ականջին թերուելով ասացի.

— Այսօր դրամ չունիմ, Երուանդ. իսկ առանց դրամի ոչինչ չեն տալ. մի ուրիշ օր կառնեմ...

— Ուրիշ օր, բայց ես գիտեմ, դրամ կայ գրպանումդ։

— Մի դահեկան միայն ունիմ, Երուանդ,—պատասխանեցի ես,—որով հաց պէտք է դնեմ, որովհետև հաց չունենք, իսկ քաղցից կարող ենք մեռնել... ասա ուրեմն կուզես խաղալիք ունենալ, թէ քաղցից մեռնել...

Նա տարակուսանքով նայեց ինձ, բայց ոչինչ չասաց։ Այնուամենայնիւ այնուհետև այլևս ոչ միայն ուշադրութիւնս չհրաւիրեց դէպի խաղալիքները, այլև ինքն էլ չնայեց դէպի այնկողմ։ Ես տարակոյս չունիմ, որ նրա փոքրիկ ուղեղի մէջ արածս հարցի մասին մի կռիւ տեղի ունեցաւ և տատմոքսի պահանջը յաղթեց հաճոյքի պահան-

ջին։ Չէ՞ որ նա այնքան էլ փոքր չէր, որ չհասկանար, թէ քաղցից մարդիկ կարող են մեռնել և այն թէ մահը ծանր բան է, վատ բան է։

Բաւական տարածութիւն անցնելուց յետոյ, երբ ամբողջ ժամանակ մտքի մէջ ընկած էի, յանկարծ նկատեցի, որ Երուանդը լայ էր լինում։ Նա լալիս էր լուռ, խեղդուած ձայնով, կարծես հաշտուած լինէր այն մտքի հետ, թէ եթէ իւր բաղձանքը չի կատարւում, դրա մէջ մեղաւոր է ինքը միայն, որով իրաւունք չունի բարձրաձայն լացով բողոքելու որևէ մէկի դէմ։

Սակայն երբ տուն հասանք և լամպան վառեցի, այդ ժամանակ նկատեցի երեխայի տխուր դէմքը։ Ես ի հարկէ ամեն ջանք գործ դրի նրան ուրախացնելու, սկսեցի հին խաղաթղթերից աշտարակ կառուցանել, որ ուրիշ անգամ այնքան զուարճացնում էր նրան, մանաւանդ երբ մի շնչով փուլ էի ածում կառուցածս շէնքը— բայց անօգուտ։ Նա մինչև անգամ ձեռք չտուեց այն մի քանի շաբաթեղէններին, որ տուել էր մեր հարուստ բայց ժլատ տան տիկինը։ Եւ մի կէս ժամից յետոյ գանգատուեց, թէ գլուխը ցաւում է, ապա՝ թէ ցուրտ է ու պարկեց անկողնի մէջ։

Աշխարհը գլխիս մթնեց, սիրտս տակնուվրայ եղաւ։ Զանազան չար ենթադրութիւններ խուժեցին գլուխս, իրենց սոսկալի հետևանքներով։ Երեխան հիւանդ էր և ես այնպէս էի համոզուած, որ հիւանդութեան պատճառը նրա ցանկութիւնը չկատարուելն էր։ Մթթէ չէր կարող պատահել, որ այդ մանկական վիշտը վերեզման տանէր

նրան։ Այս հարցը չարագուշակ բուէնի նման պտոյտ էր գալիս ուղեղիս մէջ և բերում ինձ այն սարսափելի եզրակացութեան, որ այն կարող էր մի այդպիսի բան տեղի ունենալ...

Ու տեղից ելնելով մի բոլէ մտածեցի, ինչպէս որ լինի, մի փայտի ձի ճարել Երուանդի համար, այն մեծ հաւատքով, թէ նա դրանով պիտի առողջանար։ Բայց ինչպէս պիտի ճարէի, որտեղից և ինչ միջոցով։ Ասացի որ մի դահեկան միայն ունէի, որով հաց գնեցի, իսկ չկար մէկը, որին դիմէի։ Գրութիւնս կրիտիկական էր, սակայն ճարելու միտքը չէր հեռանում գլխից։ Ուստի դրացուս աղջկան խնդրելով, որ Երուանդին մենակ չթողնի, իսկ Երուանդին հաւատացնելով, որ գնում եմ իւր սիրած փայտէ ձին բերելու, դուրս ելայ տանից։

Դ.

Մի պարզկայ իրիկուն էր, արևն արդէն մայր էր մտել և մոգ կապոյտ երկնակամարի վրայ սփռուած փայլում էին անհամար աստղեր։ Հիւսիսից փչում էր շատ մեղմ, բայց սուր հով, որ կտրում էր մարդուս երեսը և մինչև ոսկրները թափանցում։ Բայց փողոցներում անցումինչև ոսկրները թափանցում։ Բայց փողոցներում անցումդարձն աւելի խուռն էր և ցրտից սառած ձիւնը բազմութեան ոտքերի տակ խշխշալով, կարծես հառաչում, լայ էր լինում։ Ես գնում էի։ Ինձ հանդիպում էին քուրձերի մէջ փաթաթուած, իրենք իրենց վրայ կծկուած մարդիկ, պատահում էին և միջին դասակարգի մարդիկ, տաք հա-

գուստով փաթաթուած, իսկ աւելի բարդաւորները պատնում էին փակ կառքերի մէջ, գոհութեան ժպիտը շրթունքին, կարծես աշխարհիս տէրը լինէին։

Սակայն այդ բոլորը ես տեսնում էի հարևանցօրէն և երբէք միտքս նրանց վրայ չէր կենդրոնանում։ Իմ միտքն զբաղուած էր ուրիշ բանով։ Եղբայրս տանը հիւանդ էր և այն մի չնչին բանի համար։ Որքան դժբաղդ էի զգում ինձ, որ չէի կարող այդ չնչին բանը ձեռք բերել և երեխային ուրախացնել։

Կրկին այն չարագուշակ հարցը ծագից գլխումս, թէ մի՞թէ չէր կարող պատահել, որ այդ չնչին բանի համար հիւանդանար երեխան ու... մեռնէր...

Ու սարսափը պաշարեց ինձ, մահուան երկիւղը սարսռացրեց ամբողջ մարմինս և առաջին անգամ լինելով զգացի, որ ցուրտը հասել է մինչև ոսկրներս։ Սրաղացրի քայլերս, առանց ինքս ինձ հաշիւ տալու, թէ ո՞ւր եմ գնում։ Մի քանի բոպէից յետոյ արդէն գտնուում էի Բեբայի մեծ փողոցում։ Այնտեղ անցուդարձն աւելի խուռն էր. վաճառատները շրեղօրէն լուսաղարդուած, իսկ առարկաները դաղային կաթնագոյն լուսի տակ ստացել էին մի առանձին հրապուրիչ տեսք։

Bon marche՝ վաճառատան առաջև հասնելով, տաքերս այլևս առաջ չգնացին և ես կանգ առայ։

Այդ վաճառատունը գրաւում է ամենքին։ Դժուար կը գտնուի մէկը, որ նրա ցուցանակագրից խաբուելով այնտեղներս մտած ու խաբուած չլինի...

— Սակայն, տիկին, մենք ամենքս էլ գիտենք, թէ

ինչ է Bon marche՝-ն և ինչ խաբեփայլութիւններ են տեղի ունենում. ուրեմն այդ մասին խօսելը կարծեմ աւելորդ է,—նկատեց հիւրերից մէկը։

— Ա՛խ, ներեցէք, այսուհետև կը պատմեմ առանց միջանկեալի։

— Այո՛, այո՛. ի նկատի ունեցէք, որ փորբիկներն այնտեղ սպասում են և նրանց մէջ համբերութիւնն էլ փորբիկ է, պէտքէ խղճալ,—աւելացրեց ամուսինը։

Տիկինը շարունակեց.

— Մի ըսպէ կանգնելով Bon marche՝-ի առաջև, տեսայ, թէ ինչպէս բազմութիւնը հեղեղի նման խուժում էր այնտեղ և ինչպէս այնտեղից դուրս գալիս բեռնաւորուած գանազան փաթեթներով։ Ամենքն էլ զուգուած, զարդարուած էին, ամենքն էլ ծիծաղում, խնդում էին և չկար մէկը, որ մտներ կամ ելներ առանց գոհութեան ժպիտի։ Ես կարծես բնազդաբար նայեցի ինձ, իմ աղժպիտի։ Ես կարծես բնազդաբար նայեցի ինձ, իմ աղքատիկ հագուստին, իմ անշուք զարդարանքին։ Ի՞նչ տարբերութիւն կար իմ և նրանց միջև... Այդքան դին տարբերութիւն կար իմ և նրանց միջև... Այդքան ոգորմելի ու պատառոտուն հագուստով ինձ ներս պիտի թողնէին այնտեղ, ուր մտնում ու ելնում էին երջանիկ մահկանացուները... բայց ինչու անպատճառ ուզում էի ներս մտնել այդ վաճառատունը, ինչ մտքով, քանի որ ոչ մի փարայ չունէի գրպանումս, իսկ ձրի ոչ ոք ոչինչ չէր տալ ինձ։ Այս հարցը հիմայ է, որ անում եմ. այն օրը ես գտնուում էի այնպիսի վիճակի մէջ, որ ընդունակ չէի արածիս կամ անելիքիս մասին լուրջ հաշիւ տալու։ Երուանդը տանն էր, նա հիւանդ պարկած՝ խաղալիք էր

ուզում և ես որպէս տան մեծը, կառավարողը պարտական էի նրա մանկական անմեղ բաղձանքը կատարելու, մանաւանդ որ, ըստ իմ համոզման, դրանից կախում ունէր նրա առողջութիւնը, կեանքը.—այս էր այն մեսիական աստղը, որ յափշտակել էր ինձ, որ գրաւել էր ամբողջ էութիւնս և դէպի ուր ձգտում էի կուրօրէն։

Ու՝ առանց ամենափոքր վարանումի, ներս մտայ։ Իրաւ՝ դռնապանը չարգելեց ինձ ներս մտնել, բայց մաքուր հագուած կանայք աշխատում էին կարելոյն չափ լայն ճանապարհ բանալ ինձ համար։ Իհարկէ այդ անում էին ոչ թէ ի նշան յարգանքի դէպի թշուառն ու աղքատը, այլ նրա համար, որ իմ մօտաւորութեամբ նրանց շուրը չնսեմացնեմ և իմ հպաւորութեամբ չախտոտեմ իրենց։ Եւ ամենքն էլ նայում էին մի տեսակ խրտնեցուցիչ խորթ աչքով, կարծես քաղաքակիրթ բազմութեան մէջ ընկած մի վայրենի լինէի։

Վաճառատունը լիքն էր մի բանի հարիւր յաճախորդներով, որոնց քայլերից ու ձայնից յառաջանում էր մի տեսակ խուլ աղմուկ։ Այդ միակերպ ադմուկին երբեմն խառնւում էր նաև գործակատարների զիլ կանչը և կառայի մօտ հնչող դրամի ալսորժելի ձայնը։ Այս բոլորը իմ վրայ թողնում էին մի կողմից շատ ծանր, ճնշիչ, միւս կողմից շատ հեշտալի տպաւորութիւն։ Այնուամենայնիւ ես կանգ առայ և նայեցի շուրջս ճիշտ այնպէս, որպէս խառնիխուռը երազներից սթափուող մէկը։ Այդ ժամանակ միայն ինքս ինձ հարցրի.

«Ինչու՞ եկայ այստեղ»...

Բայց դեռ այս հարցիս չպատասխանած, ուշադրութիւնս դարձաւ դէպի խաղալիքների բաժնի կողմը, ուր ժողովուած էր յաճախորդների մի մեծ բազմութիւն։ Նրանցից իւրաքանչիւրը իւր ճաշակի և կարողութեան յարմար առարկաներ էր ընտրում։ Ես էլ խառնուեցի նրանց և նրանց օրինակին հետեւելով, սկսեցի առարկաները մի առ մի տնդղել։ Չգիտեմ որքան տեւեց այս զործողութիւնը, բայց գիտեմ, որ շատ առարկաներ շոշափեցի, շատերն բայց գիտեմ, որ շատ առարկաներ շոշափեցի, շատերն առայ ու վայր դրի, մինչև որ ձեռքս ընկաւ մի մեծ ու մեշքեղ ձի, ոսկեգոյն երիզներով զարդարուած թամբով, տաքսեայ սանձով և այլ զարդերով։ Եւ որքա՜ն խելօք էին նայում ինձ այդ արհեստական ձիու արհեստական աչքերը. կարծես այդ ձին ժպտում էր և ասում «ինձ ցած մի դիր, առ ինձ ու տար, ես կուրախացնեմ հիւանդ եղբօրդ, ես կառողջացնեմ նրան»...

«Որքա՜ն կուրախանայ Երուանդը, եթէ այս ձին իրեն տանեմ... անցաւ մտքովս և սիրտս լցուեց անսահման ուրախութեամբ։ Ինձ թւաց թէ զանձ եմ գտել, թէ թշուառութեան ուրտականը խոյս է տուել ինձնից։ Բայց դա երկար չտեւեց. աչքս ընկաւ ձիու վզից քարշ արած թղթի կտորին, ուր խոշոր տառերով գրուած էր նրա արժէքը—20 դահեկան։

«Քսան դահեկան, կրկնեցի մտքումս և այդ անգութ, անողոք թիւը սթափեցրեց ինձ։ Քսան դահեկան—այնինչ ես չունէի և ոչ իսկ մի դահեկան, մի հատ փարայ...

Այնուամենայնիւ ցած չդրի ձեռքիցս, որովհետև միշտ ինձ թւում էր, թէ այդ ձին իւր խելօք աչքերով և ներ-

կուած կարմիր շրմանքով ասում էր. «տար ինձ, ես Երուանդին կառաջացնեմ»։

Ու իմ մէջ ծագեց մի շատ յանդուգն միտք...

Բ.

Նախ քան պատմելս, թէ ինչ յանդուգն միտք էի յղացել, պէտք է ասեմ, որ այսօր էլ միտքս դալիս, ամօթից կարմրում եմ։ Եօթը տարի է անցել այն օրից, ամբողջ եօթ տարի, այնուամենայնիւ հենց հիմայ էլ ամօթի քրտինքը ողողում է ինձ։

Ես վճռեցի այն ձին գողանալ... իմ կեանքում գողութիւն արած չկայի և այդ առաջին փորձն էր, որ որքան էլ յանդուգն էր, այնուամենայնիւ կատարելապէս յաջողուեց ինձ։ Ձին առանց ձեռքիցս վայր դնելու, նայեցի շուրջս. ամէն ոք զբաղուած էր իւր գործով, իսկ այդ բաժնի գործակատարը մի շատ փափկիկ, բայց չարաճճի օրիորդի հետ սակարկութեան էր մտել։ Ինձ վրայ ուշադրութիւն դարձնող չկար։ Մի քանի քայլ փոխելով, բաժանուեցի նրանցից և մտայ երթևեկողների խուռն հոսանքի մէջ։ Այդ տեղ կրկին դարձայ յետ ապահովութեան մասին հաւաստիանալու համար և տեսնելով, որ ինձ նայող կամ լրտեսող չկայ, համարձակ քայլերով մօտեցայ դռանը։ Ձին ձեռքումս էր. ես չթագցրի։ Դռնապանը, որ մի չարաճճի յոյն էր, մէկ նայեց ինձ, մէկ ձեռքիս ձիուն ու քթի տակ խնդալով բացարեց դուռը։

Ես դուրս թռայ, դուրս թռայ խելագարի արագութեամբ և—ազատուած էի...

Այլևս ամբողջ աշխարհն իմս էր այնքան ուրախ էի, այնքան գոհ և երջանիկ։

«Որքան պիտի ուրախանայ Երուանդը, ինչպէս կը համբուրի նրա խելօք աչքերը, սիրուն պարանոցը և մեծաքանչիւռ բաշը...

Կրկնում էի ես անդադար և արհամարելով ճակատս ընդարող ցուրտն ու ոտքերիս տակ հառաչող ձիւնը, խենթի նման շտապում էի տուն...

Սակայն Bon marche-ից բաւական արդէն հեռացել էի, երբ ետևից ինչ-որ աղմուկ լսեցի։ «Բռնեցէք...» գոռում էին հեռուից և ձայնը գնալով մօտենում էր ինձ։

Սառը քրտինքը ողողեց ճակատս. երկիւղն ու ամօթը պաշարեցին ինձ, սիրտս սկսեց անսովոր արագութեամբ բաբախել և զգալով, որ ծնկներս ծալւում են, այլևս յառաջ գնալու ուժ չունեմ, քաշուեցի դէպի պատը և թիկնելով, կանգ առայ։ Աղմուկը գնալով մօտենում էր, ես երկիւղով նայեցի դէպի այն կողմը։ Մի քանի հոգի վազում էին դէպի ինձ, որոնց մէջ և ինչ լինելը մթութեան պատճառով անկարող էի որոշել։ Բայց ես համոզուած էի, որ դրանք գալիս են ինձ բռնելու։ Չէ՞ որ ես ձի էի գողացել և նա դեռ ձեռքումս էր։ Մտածեցի խաղալիքը վար ձգել ու փախչել, բայց ձեռքս չկնայ. յիշեցի, որ Երուանդը հիւանդ պարկած է տանը։ Վազողներն արդէն մօտեցել էին ինձ։ Նրանցից մէկը, որ միւսներն արդէն մօտեցել էին ինձ։

ներից առաջ էր, եկաւ ու անցաւ, իսկ ետևինները դեռ աղաղակում էին «բռնեցէք... գողը»... Ու վերջիններն էլ եկան, անցան առանց վրաս իսկ նայելու։

Ազատ շունչ առայ, զգալով, որ երկիւղս իզուր էր։ Աղմուկն արդէն հեռացել էր. ես հազիւ էի լսում նրանց աղաղակը։ Էլ վտանգ չկայ՝ ազատ եմ. մտածեցի ես ու շարունակեցի ճանապարհս։ Բայց զգացի, որ սիրտս առաջուայ նման հանգիստ չէ՝ որ գողութեան մէջ յանցանք գործած լինելու գիտակցութիւնը գլուխս էր բարձրացրել իմ մէջ։ «Ես գող... ես գող»... անդադար կրկնում էի մտքումս և ինքս ինձ դատապարտում աւելի անողոք կերպով, քան կարող էր դատապարտել մի անգութ դատաւոր։

Ես այդ օրը աւելի լաւ համոզուեցայ, որ մարդուս խիղճը ամենաարդիւն, անաչառ և զօրաւոր դատաւորն է, որ նախախնամութիւնը բերել, ընակեցրել է մեր մէջ։

Թէև այլևս առաջուայ արագութեամբ չէի գնում, բայց արդէն հասել էի մեր տանը։ Ես արդէն պարզ տեսնում էի այն լուսամուտը, որ լուսաւորուած էր լամպայի աղօտ լոյսով և որի ետև պարկած էր Երուանդը։ Ես նրան միշտ պարկած էի երևակայում և ենթադրում էի, որ տաքութիւնը սառեցել է, որ զառանցում է և զառանցանքի մէջ կրկնում է զանազան խաղալիքների անուններ։

Տունը այժմ մի քայլի վրայ էր, մի քանի ակնթարթ ևս և ես պիտի գտնուէի սենեակում, Երուանդի կողքին և սիրուն ձին դնէի նրա առաջ։ Որքան պիտի ուրախանար նա, ինչպէս պիտի վեր թռչէր անկողնից,

գրկէր ձիուն համբուրելով նրա ապակեայ աչքերն ու մետաքսեայ բաշը...

Ես կանգ առայ ոտքերս առաջ չգնացին, կարծես մի աներևոյթ ոյժ, մի աներևոյթ ուժեղ հոսանք քշում էր ինձ դէպի յետ։ Իսկ իմ մէջ կատաղում էր մի սարսափելի փոքրոգիկ, կարծես չարն ու բարին մահացու կռիւ էին մղում միմեանց դէմ։ Զգիտեմ որը յաղթեց սրանց, միայն գիտեմ, որ փոխանակ տուն մտնելու և Երուանդին ուրախացնելու, դարձրի երեսս դէպի յետ։

Գիշերից բաւական անցել էր, եղանակն աւելի ևս ցրտել, որա հետ մէկ տեղ քամին սաստկացած լինելով, ձեան փոշին ասեղների նման ծակոտում էր մարդուս երեսը։ Սակայն իմ գլուխն այրւում էր, քրտինքը ողողել էր ինձ։ Ու գնում էի, գնում էի այնքան արագ, որքան նեղում էին սպառուած ուժերս։ Անցուդարձը զգալի կերպով նուազել էր, իսկ Bon marché-ն համարեա թէ դատարկ էր։ Մտնելով այնտեղ, ինձ թւաց թէ գտնւում եմ աւարի մատնուած մի վայրում. ապրանքները խառնի խուռը թափուած էին, աստիճանակներն ու դարակները կիսով չափ դատարկ, յատակը լիքը գոյնզգոյն թղթի կտորներով։

Ես անարգել հասայ գանձապահի մօտ և այժմ արածիս գիտակցութիւնն ունենալով ասացի նրան։

— Առէք, պարոն, այս ձերն է, ես գողացայ, տարայ մինչև տուն, բայց ահա կրկին յետ եմ բերում ձեզ... առէք այս կապարի լեռը, որ ճնշում է կուրծքս, առէք...

Եւ խաղալիքը նրա առջևը դնելով, առանց սպասե-

լու, թէ ինչ էր կամենում ասել ապուշ կորած դանձապահը, դարձայ յետ։ Բայց հազիւ մի քանի քայլ էի փոխել, երբ մի այրական հզօր ձեռք, ցաւեցնելու աստիճան ամուր սեղմելով վտիտ բազուկս, կանգնեցրեց։

Ես բարկութեամբ նայեցի անծանօթին, որ մի այդպիսի կրիտիքական րոպէում կտրում էր ճանապարհս։ Նա մի զեղեցիկ ու շնորհալի երիտասարդ էր, դէմքի համակրելի, մինչև անգամ գրաւիչ արտայայտութեամբ։

Այնուամենայնիւ խստութեամբ հարցրի.

— Ի՞նչ էք ուզում ինձնից։

Նա շարունակում էր նայել ինձ այնքան հեզ ու բարութեամբ լի աչքերով, որ զղջացի այնքան խիստ հարցիս վրայ։ Նա քաղաքավարութեամբ առաջնորդեց ինձ վաճառատան ուելի ազատ անկիւններից մէկը։ Ես թոյլ տուի, որ ուղածն անէ, որովհետև այդ վայրկեանին որ և է ընդդիմութիւն ցոյց տալու ոյժ չունէի։

— Նախ ներեցէք հարցնել, ինչէս կոչել ձեզ, տիկին, թէ՞ օրիորդ, հարցրեց նա զանգակի նման հնչիւն ձայնով։

— Ես... օրիորդ եմ... պատասխանեցի։

— Շատ շնորհակալ եմ, օրիորդ, որ չմերժեցիք առաջին հարցիս պատասխանել,—ուելացրեց նա։—Այժմ լսեցէք, դուք երբ ներս մտաք, չփոթուած մօտեցաք դանձապահին և նրա առջևը դրեցիք ձի-խաղալիքը, ես այնտեղ կանգնած էի և լսեցի ձեր կարճ խօսքերը։ Ձեր ասածից երևաց, որ դուք այն ձին գողացել էիք, բայց յետ բերիք նրա համար, որ նա կապարի լեռան նման ճնշում էր ձեր կուրծքը... Եւ հնթադրում եմ, որ գոյութիւն ունի մի ծանր զգացմունք կամ յարգելի պատճառ, որ թոյլ էիք տուել ձեզ ձեր արիւնն և բիւրեղի նման մաքուր խղճի հակառակ քայլ անելու, գողանալու։ Սակայն այդ բանը ինձ այնքան հետաքրքրեց, որ թոյլ տուի ինձ մօտենալ ձեզ և խնդրում եմ, եթէ հնարաւորէ, պատմեցէք ինձ այն շարժառիթը, որ ստիպեց ձեզ անելու այդ անպատուաբեր քայլը... Մի ամաչէք, օրիորդ, լոկ հետաքրքրութիւնը չէ ինձ խօսեցնողը, այլ ուելի զօրաւոր բան և հաւատացէք, որ չէք զղջալ։ —

Առանց ընդդիմախօսութեան կարճ կերպով պատմեցի նրան, պատմեցի փլած տրտով և այնքան անկեղծ, որքան կարելի է պատմել խոստովանաւորը միայն։ Մինչև այդ րոպէն ես գտնւում էի այնպիսի լարուած, մագնիսացած վիճակի մէջ, որ ոչ միայն աչքերիցս արտասուք չէին գալ, այլև արիւն չէր կաթի ինձնից։ Սակայն մի ակնթարթում ամեն ինչ յեղաշրջուեց։ Ինձ թւաց թէ կրծքիցս մի ծանր բան գլորուեց ցած, թէ սիրտս, հոգիս և բոլոր զգացումներս կաշկանդող, ու սառեցնող ցրտութիւնը փարատեմներս կաշկանդող, ու սառեցնող ցրտութիւնը փարատելով, ինձ ողողեց մի տեսակ քաղցր, կենարար ջերմութիւն։ Եւ արտասուքը հեղեղեց ինձ, իւր աղի կաթիլների հետ դուրս թափելով վշտի, դառնութեան մնացորդը։

Ինձ գողութեան մղող պատճառը համառօտակի պատմելուց յետոյ, բարձրացրի գլուխս և համարձակ նայեցի նրան։

Նրա աչքերն էլ թրջուած, արտասուալից էին։

— Խեղճ աղջիկ, խեղճ աղջիկ... մրմնջաց նա մի

քանի անգամ, ասա խնդրելով որ մի փոքր սպասեմ, մտաւ վաճառատան կենդրոնը.

Բայց երբ վերադարձաւ, ձեռքին ունէր մի մեծ փաթեթ, իսկ այդ փաթեթի վրայ այն ձին, որ զողացել էի։

— Խնդրեմ, ընդունեցէք, օրիորդ... սա չնչին բան է, բայց առայժմ այսքանս միայն կարող եմ անել...

Ես լռութեամբ ընդունեցի և ուզում էի շնորհակալութիւնս յայտնել, երբ նա արդելելով հարցրեց։

— Կարող եմ հարցնել, թէ որտեղ էք բնակւում։

Ես ասացի մեր տան հասցէն։

Նա ժամացոյցին նայեց ու ասաց.

— Բաւական ուշ է ու ցուրտ, գնացէք, օրիորդ, վաղը նոր տարի է, ես անպատճառ կգամ շնորհաւորելու։... Ես կփափակէի երկար խօսել ձեզ հետ, աւելի լաւ ծանօթանալ և անկեղծ բարեկամներ դառնալ։

Ու ձեռքս ջերմագին սեղմելով ճանապարհ դրեց։

Զ.

Այս անակնկալ հանդիպումը այնքան խոր տպաւորութիւն թողեց վրաս, որ մի բոպէ ուզում էի կասկածել, թէ դա իրականութիւն է։ Ամբողջ ճանապարհն անցայ մի տեսակ անբնական վիճակի մէջ, մինչև անգամ յանցանք էի համարում մտածել, թէ Երուանդը հիւանդ է, թէ նրան պարկած, տաքութեան մէջ զառանցելիս պիտի գտնեմ։ Սակայն նրան պարկած գտայ։ Թէև տաքութիւն չունէր, բայց չափազանց թառամած երևաց ինձ, ուստի

նրան ուրախացնելու մտքով, բացարի փաթեթը։ Ինչեր ասես, որ չկար այդ փաթեթի մէջ, սիրուն խաղալիքներ, շաքարեղէն, սիրուն տուփեր և բացի այդ մի փոքրիկ պորտմոնէ լիքը մանր դրամներով։

Երջանիկ կաղանդ էր. շառագեցի համեստ սեղան սարքել, թէև Երուանդը շրջապատուած մէկը միւսից գրաւիչ քեզ, թէև ինձ համար հարստ սեղան սարքեցին նրա ուրախացնելու մտքով, բացարի փաթեթը։ Ինչեր ասես, որ չկար այդ փաթեթի մէջ, սիրուն խաղալիքներ, շաքարեղէն, սիրուն տուփեր և բացի այդ մի փոքրիկ պորտմոնէ լիքը մանր դրամներով։

Երջանիկ կաղանդ էր. շառագեցի համեստ սեղան սարքել, թէև Երուանդը շրջապատուած մէկը միւսից գրաւիչ քեզ, ոչ մի ուտելիքի ձեռք չտուեց։ «Այս որառարկաներով

կարող հետաքրքրել։ Այսքանս ասեմ, որ նա կեանքիս պատմութեան հետ լաւ ծանօթանալուց յետոյ, վեր եկաւ և հարցրեց.

— Չէ՞ք ուզի, օրիորդ, ինձ ընտրել ձեզ ամուսին։

Իրաւ այդ հարցն անակնկալ էր և ես թէ չէի սպասում մի այդպիսի հարցի և թէ նրան գիտակցօրէն պատասխանելու համար շատ անփորձ էի, սակայն անսալով սրտիս ձայնին, դրական պատասխան տուի։

Նա չափազանց ուրախացաւ։ Դրանից մի շաբաթ վերջը օրինաւորապէս նշանուեցինք և մի երկու շաբաթ յետոյ տեղի ունեցաւ մեր ամուսնութեան հանդէսը...

— Ձեր ամուսնութեան հանդէսը, զարմացած հարցրի ես։

— Այո... սիրէ՛ չզուշակեցիք, որ այդ երիտասարդը Միհրանն էր։

— Միհրան էֆէնդի՞ն...

— Այո, պատասխանեց տիկինը ինքնագոհ ժպիտով։

— Իսկ այս փոքրիկնե՞րը... ձեր եղբայրն ինձ ասաց, թէ նրանք, բացի երկուսից, բոլորն էլ որբեր են։

— Այո... Գիտէք, ամուսինս փափակեց մեր առաջին հանդիպումի յիշատակը որևէ մի բանով յաւերժացնել և ընտրութիւնը թողեց ինձ։ Բաւական ծանօթ լինելով ամուսնոյս բնաւորութեան և տրամադրութեան հետ, ես ընտրեցի այս միջոցը, այսինքն, քանի որ ողջ ենք և որքան ներում են մեր միջոցները—թաղի որբ ու աղքատ երեխաների համար մի մի ձեռք հագուստ առնենք նոր տարուն և տօնածառ սարքելով կաղանդի երեկոյեան

հրաւիրենք մեզ մօտ զուարճանալու։ Ամուսինս յանձն առաւ և ահա այս տօնածառը այն որբ երեխաների համար է։

— Ինչո՞ւ անպատճառ այդ միջոցն ընտրեցիք, տիկին և ոչ մի ուրիշը, հարցրեց հիւրերից մէկը։

— Որովհետև... Սակայն դուցէ չկարողանամ սեփական բառերով լաւ բացատրելու ձեզ դրա պատճառը, ուստի թոյլ տուէք որ բացատրեմ առակով։ Մօլլա-Նասրէդդինը մի օր տանիքից վայր ընկնելով, կոտրում է թևն ու կողը և պարկում անկողնում։ Դրացիները այդ դժբաղդութեան, լուրն առնելով շտապում են մօլլային այցելութեան, իսկ մօլլան զուշակելով այդ բանը, վաղօրօք պատուիրում է կնոջը՝ նախ քան եկողների առաջև դուռը բանալը, հարցնել թէ նրանք, այսինքն այցելուները երբ և ինչ տանիքից ընկնե՞լ են ցած. եթէ այո — բաց անի դուռը, եթէ ոչ—պատասխանի, թէ մօլլան մարդ չի ընդունում։

— «Ի՞նչ միտք ունի այդ հարցնում է մօլլայի կինը։ մօլլան պատասխանում է։

— «Այն միտքն ունի, որ տանիքից ցած չնկնողը, ցած ընկնողի դրութեան մէջ մտնել չի կարող, նրա ցաւը, տանջանքը, տառապանքը ըմբռնել ու չափել չի կարող...

Կարծեմ առակիս միտքը հասկանալի է։ Ես արդէն տանիքից ցած էի ընկել և այդպիսիների դրութիւնը շատ լաւ գիտէի։ Այն օրը, երբ ես անկարող էի եղբօրս մի հասարակ ցանկութիւնը կատարել, ինձ թւում էր, թէ աշխարհիս թշուառագոյնն եմ։ Չէ՞ որ ամեն մի որբ երե-

խայ կարող է ունենալ նոյն ցանկութեան բուռն կարօտը, որպիսին արտայայտեց Երուանդը։ Ես չեմ կարող որև է չափով ու կշռով սահմանել, թէ որքան ծանր մեղք է, որքան խղճի ու բանականութեան հակառակ մատաղ սրտերը թողնել կարօտի տանջանքների մէջ տապակուելու...

Այս էլ աւելացնեմ, որ այն ժամանակ հանդամանքների, իրերի և երեոյթների վրայ ուրիշ աչքով էի նայում, իսկ այժմ-ուրիշ։ Այժմ համոզուած եմ, որ տանջիչ վայր ընկնողի դրութիւնը մտնելու համար անպատճառ պէտք չէ, որ մարդս ինքը նոյն փորձանքին ենթարկուած լինի։ Այդ մասամբ տգէտ, անկերթ մարդկանց բաժինն է, որոնք ընդունակ չեն թափանցելու պարտականութեան նուրբ խաւերի մէջ։ Գիտութիւնը, քաղաքակրթութիւնը միջոց է տալիս մարդուն առանց տանջիչ վայր ընկնելու, ըմբռնել վայր ընկնողի վիշտն ու տառապանքը և օգնութեան փութալ։

Սակայն որքան քաղաքակրթւում են մարդիկ, պարտականութեան զգացումը խոյս է տալիս, բարեգործութիւնը մեռնում է և այժմ ուելի քան առաջ թշուառութիւնը մեծամեծ զոհեր է տանում... Ի՞նչ է այս տխուր երեոյթի պատճառը։

Գրագէտ հիւրերը, որ մեծ ախորժակ ունէին խօսելու և իրենց գիտութիւնը փայլեցնելու, պատրաստուեցին թունդ վիճաբանութեան ենթարկել տիկնոջ վերջին հարցը, սակայն տան տէրն ընդհատեց ասելով.

— Այդ վիճաբանութիւնը թողէք յարմարագոյն ժամանակի. մի մոռանաք, որ երեխաներն, առանց այն էլ, երկար սպասեցին։

Այսպէս դուռը բանալով, կանչեց նրանց։ Անհոգ և ուրախ մանուկները այծեամների նման թռչկոտելով ներս վազեցին և շրջապատեցին տօնածառը։ Որպէս զի խտրութիւն չլինի, տիկինը նուէրների բաժանումը կատարեց վիճակահանութեամբ, որ նոյնքան մեծ զուարճութիւն պատճառեց թէ մեզ, թէ մանուկներին։

— Ահա սրա մէջ ես գտնում եմ ամենամեծ սփոփանք, —ասաց տիկինը նուէրները բաժանելով.—այս անհայր, անմայր աղքատ երեխաներին փոքրիկ հաճոյք պատճառելով, թւում է ինձ թէ ես աշխարհիս ամենաերջանիկ ու բախտաւոր կինն եմ և սիրտս լցւում է ցնծութեան զգացումով։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՍՅՈՒՆԻ ԱՆՎԱՆ

Բագուի Հայոց
Հոիփսիմեան Դպրոց
Եկեղ. ժխտի. (օրիորդաց)

«Ազգային գրադարան»
NL0350476

42797

Մեր հրատարակութեամբ լոյս են տեսել MARS-ի հետևեալ աշխատութիւնները.

1) Քոյրը (պատկեր) . . . . . 25 կոպ.
2) Եփիմ (մոռաց. Յիշատ.) . . . . . 25 կոպ.
3) Ի՞նչպէս ամուսնացայ (կազանդի զրոյց) . . 10 կոպ.

Պատրաստ են տպագրութեան համար հեղինակի հետևեալ աշխատութիւնները.

1) Ոսկու Զոհը (վէպ):
2) Մարիցա:
3) Հաշտութիւն:
4) Եգիմի վարդը:
5) Անդունդի եզերքում:
6) Ալի-փաշա:
7) Յիմարներ (ժամանակակից վէպ):
8) Արևան լճում կամ 1876—1896 (վէպ թիւրքահայերի կեանքից):



Այն հրատարակութիւնները ձեռք բ
են հրատարակչին. Баку, О. Осепяну Кр

891.99
Ս-37